ՊԱՏԿԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

Մեռասաներորդ դար։

ԺԱ. Պատկեր. ամ տեառն 1000–1099

Պետրոս կաթողիկոս Գետադարձ։	Ա. Շարականք մարտիրոսացն և հանգստեան ըստ ութ ձայնից. և ոմանք 'ի մանկտեացն։ — Բ. Սմին ընծային և ճառք ինչ, (անյայտք)։ — Գ. Ցիշատակարան Ոսկեբերանի քաղուածոյ ճառիցն զորս տուեալ է գրել վասն իւր։
Անանիա Սանահնեցի։	Ա. Մեկնութիւն չորեքտասան թղթոցն Պօղոսի հաւաքեալ 'ի բանից Եփրեմի, Ոսկեբերանի և Կիւրղի։ — Բ. Մատեան մի անուանեալ Դիմադրութիւն առ Յոյնս. (անստոյգ)։ — Գ. Խորհրդական և մտաւոր տեսութիւն և համեմատութիւն Աւետարանչացն. (անստոյգ)։ Անանիա անուամբ գտանին և յետագայքդ, ոչ ունելով յայտնի ստուգութիւն լինելոյ Սանահնեցւոյս։ Ա. Խրատական ճառ։ — Բ. Խրատ քահանայից։ — Գ. Ճառ 'ի խորհուրդ Յովհաննու մարգարէի։ — Դ. Ի խորհուրդ կատարման սուրբ առաքելոյն Պետրոսի։ — Ե. Ի խաչելութիւնն Պետրոսի առաքելոյն։ — Զ. Յաղագս Յովհաննու Մկրտչի։
Սարգիս Սեւանեցի։	Զսմանէ աւանդի արարեալ ճառս և մեկնութիւնս, ևս և թարգմանութիւնս, բայց սակայն և ոչ մին յայսպիսեացս երևի։ Յանուն Սարգսի կայ թարգմանութիւն ինչ ճառի յաղագս ննջեցելոց. (անստոյգ)։
Արիստակէս Լաստիվերտցի։	Ա. Պատմութիւն Հայոց ողբերգական ոճով։ — Բ. Ճառք երկու, մինն կիսատ. (անստոյգ)։ — Գ. Մեկնութիւն ընթերցուածոց. (անստոյգ)։
Յակոբ Սանահնեցի։	Ա. Թուղթ մի յաղագս միաբանութեան Հայոց ընդ Յոյնս. (անյայտ)։ — Բ. Սմա ընծայի Ողորմեայն հանգստեան վառ ձայնի։
Գրիգոր Վկայասէր։	Ա. Վկայաբանութիւն Սրբոց։ — Բ. Թուղթ մի վասն Զատկին։ — Գ. Թուղթ մի առ քահանայապետն Հռովմայ Գրիգոր Է. (անյայտ)։ — Դ. Թարգմանութիւն ներբողին որ 'ի սուրբն Ոսկեբերան արարեալ 'ի Պրոկղէ։ — Ե. Դարձեալ հաւանական կարծեաք սմա ընծային թարգմանութիւնք և այլոց ճառից Պրոկղի։ — Զ. Թարգմանութիւն ճառին մեծին Եփրեմայ 'ի գովեստ Յովհաննու Մկրտչի։ — Է. Դարձեալ նորին կանոն Ոտնալուայի*։
Կիրակոս վարդապետ։	Թարգմանութիւնք մեկնութեան Գործոցն առաքելոց Յովհաննու Ոսկեբերանի, և մեկնութեան Յովհաննու աւետարանչի և այլոց ճառից նորին. (անստոյգ)։
Մատթէոս եպիսկոպոս։	Ա. Թարգմանութիւն վարուց Յովհաննու Ոսկեբերանի*։ — Բ. Թարգմանութիւն վարուց Գրիգորի Նազիանզացւոյ։
Թէոդորոս Այտիսոսիկ։	Զսմանէ աւանդի արարեալ համառօտ ինչ մեկնութիւն 'ի վերայ չորից Աւետարանչաց. (անյայտ)։
Սիսիանոս վարդապետ։	Ճառ մի 'ի վերայ քառասուն Մանկանց*։
Պօղոս Տարոնացի։	Թուղթ մի գրեալ 'ի պատասխանի Թղթոյն Թէոփիստեայ, լի թշնամանօք*։